



# Ա Բ Ա Ր Ա Ծ

Թիկ Ե. — ԵՐԶԱՆ ԺԳ.

1880

ՏԱՐԻ ԺԳ. ՄԱՅԻՍ. 31.

ՄԱՐԴԻ ԳԼԽԻՆ ԵԿԱԾ ՓՈՐՉԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ.

« Զախորդութիւնները սիրտս կոտրումն, ինչպէս մեծ քամին մենակ կանգնած եղեգը կոտրում ու պառկեցնումէ: Այլ ևս երբէք չի վերկենայ տեղից, այն է որ մի անդամ կոտրվեցաւ ու պառկեց: այն պառկելը պառկել է: » Այլ ևս չեմ հաւատում կեանքի բազգաւորութեան, և երբէք յոյս չունիմ: որ երբ և իցէ այս ծանր զիշերից յետո զարձեալ արև ծագէ: » Ճակատազրիս ձեռքը ինձ ծանր հարուած տուաւս այսուհետեւ աւելի սև օրեր պէտքէ քաշեմ: ինչպէս երկումէ: Շատ սարսափելի բաներ զըլ-խովս անց կացան. վախենումնմ, որ շատ աւելի մեծ ցաւեր ես ունենամ քաշելու: »

Դու, որ այսպիսի գանգատներ ես անում ու սիրադ փորումդ հալվում: արգարեւ ողորմելի մարդ ես ոչ թէ նորա համար, որ մեծ անբազգութիւն է եկել զլիմիդ, այլ նորա համար, որ վախենումս, թէ աւելի ևս մեծ անբազգութիւն քաշես: Պատճառ որ անձն անբազգութիւններէն հէ անբազգութիւններէն էն է, որ մարդէն սրտէ էջ իմոնէ, ինչ որ այդ քանի է, որ մարդէն իմոնէ էն, որ մարդէն իմոնէ էն:

Դու ասումնս, որ քեզ համար ոչ մի միսիթարութիւն չկայ: Այդ միսիթարութիւնը քո հաւատդ ես չէ տալիս քեզ: Եթէ որ չէ տալիս, ուրեմն քո հաւատդ շատ խեղճ միսիթարիչ է եղել քեզ համար, որ մինչև անգամ այնքան ոյժ չունի: որ չէ կարողանում քո մեծ թշուառութեանը մէջ քեզ միսիթարել ու սիրադ հանգարանեցնել: 2է, դու Քրիստոսի հաւատը չունիս, չէ: Աստուծու սէրը քո սրտիդ մէջ լցված չէ: Ով որ Քրիստոսի ծշմարիտ հաւատացողն է, ով որ Քրիստոս Աստուած և նորա տուած ուսումն իւր սրտումն ունի, ում մէջ որ Աստուած է բնակած, նա այն մեծ հաւատն ու

Հաստատ յշյսն ունի, որ ոչ մի փորձանքի, ոչ մի անբաղդութեան ոյժը նորա սրտից հանել չեն կարող. այդ տեսակ մարդն ամենքի համար դուռը բաց, այնպիսի տեղ ու ապաստանարան ունի, ուր որ ճակատագրի նետերը չեն կարօղ իւրեան հասնել ու կալել: Քեզ ասելու բանս միայն այսչափ չէ, այլ այն ևս աւելացնեմ, որ Պօղոս առաքեալի նման պէտքէ ասենք հոգու մի սուրբ ուրախութիւն լցված սրտով թէ ձն+ մւշ համար պարծան+ էն+ համարում մէր +աշածները Ողորմելի հասկանումն դու այս խօսքերը, խելքդ ի՞նչ է ասում քեզ:

Խնչպէս որ գիշերը անց կենալուց յետոյ, լոյսը բացվումէ ու օրը սկսում: այնպէս ևս մեր կեանքի մէջ լաւ ու վատ ժամերն են մին մինի ետևից դաւիս ու փոխվումնեն, բայց դու իմանումն չէ, չես իմանում, թէ ինչն է մարդիս համար ամենավտանգաւոր բանը, այն բանը, որ ամենից գժուարն է մարդիս համար տանելու: Այս բանը—Ճշմարիտն եմ ասում քեզ— անբաղդութիւնը չէ, այլ բարեկարգութիւնը:

Հաղար հողեղէն մարդիկների մէջ շատ անգամ հաղիւ կպատահի գտնել մի մարդ, որ կարողանար բաղդաւոր օրերում միշտ հաստատ մնալ իւր մարդկային արժանաւորութեան մէջ ու ինքն իւրեան վատ ասելու, ինքն իւրեան մեղաւոր բռնելու տեղ չունենար: Ընդհակառակն նեղութիւնը հերոսների մայրն է եղած, իմաստունների դաստիարակն ու վարժապետը, Ճշմարիտն եմ ասում ու սուտ շկայ խօսքիս մէջ, որ շատ մարդ եմ տեսել, որ իւրեանց ցաւեր, նեղութիւններ, անբաղդութիւններ քաշած ժամանակն են մեծ ու ամենքի համար պատուելի մարդիկ երեացել իսկապէս, հսկայի ոյժով ու հոգու զօրութեամբ ամենածանը ու ամենազժուարին պատերազմի մէջ չյաղթվել, բայց շատ ու շատ աւելի մարդիկ եմ տեսել, որոնց համար շատ ծանր ու դժուար է եղել իւրեանց բաղդաւորութիւնը տանելու, իւրեանց բաղդաւորութեան մէջ զիմանալու, մարդիս արժանի կեանքով ու գործով ապրելով:

Մեզ չպատահէլու, չտեսնելու, չգտնվելու բան չէ, այլ շատ տեղ մեր աչքի առաջին են այնպիսի աղքատ ու առաքինի ընտանիք, որոնք այսօրից միւս օր հաղիւ են կարողանում ապրել, օր աշխատումնեն, օր ուտում ու ապրում, Բարեեպաշտ հնագանդութեամբ յանձնվելով Աստուծու կամքին, անտրատունջ տանումն նոքա իւրեանց ծանր վիճակը: Եթէ որ ուտելու ու հաղնելու ևս չունենան, չեն յուսահատում, զիմանումն: Մին մինի վերայ ունեցած սէրը նոցա միխթարումէ ու չէ մողնում սրտները կոտրելու, որ իւրեանց պատիւ տռեղ չկոյս, այլ բանի տեղ չգնողներ, մարդ չչամրողներ, անտես անողներ ու արհամարհողներ կան շատ. աշխատութիւնն ու քաղցածութիւնը նոցա աղքատութեամբ ձեռք բերած կերակրին համ է բերաւմ. մի փոքրիկ յաջողութիւնն ևս մեծ ու շատ ուրախութիւն կարող է բերել: Բայց ասենք թէ յանկարծ փոխվի այդպիսի մի ընտանիքի գառն վիճակը. ասենք թէ այսպիսի, ամենևին մաքից չանց կացնելու մի բան պատահէց, որ յոյս չունեցած տեղից մի անակնունելի ու մեծ հարը-

առութիւն ձեռներն ընկաւ, կարելի է մի հեռու ազգականի մահից յետոյ, որի ժառանգները միայն դոքա որ գտնվեցան մնացած եղան։ Մէկ ևս տեսնես, չին, անպիտան, փոքրիկ, խեղճ տունը այլ ևս չկայ, մի գեղեցիկ տան փոխվեցաւ, կտրտած, պատռտած, կարկատաններով հաղուստի տեղը լաւ բաներ հագան։ Այս կողմից այն կողմից ու ամեն կողմից դալիս լցվու մեն նոցա տունը բարեկամներ, որ շնորհաւորումեն նոցա բաղդաւորութիւնն ու կերպ կերպ կեղծաւորութիւններ անում ու ասում։ Այն գերգաստանը, որ յառաջն իւր ունեցած քիչ բանովն թէ գոհ էր, թէ ուրախ, այժմ մեծ մեծ պահանջմունք է անում։ Հպարտութիւնը, որ մինչեւ ցայդմ ամենեին տեղ չուներ նոցա տանն ու իւրեանց սրտի մէջ, այժմ կամաց կամաց երկումէ ու ցոյց տալիս իւրեան և իւր զօրութիւնը, տիրումէ նոցա. նոցա սիրտը մեծանումէ, և զորա հետ միասին մտնումէ նոցա ամեն մինի զլուխը, որ իւր խօսքը պէտքէ յառաջ գնայ, իւր սրտի կամեցածն պիտի կատարեն, նա այլ ևս մարդ չէ մնում, որովհետեւ յամառութիւնը քմահաճութիւնը, ապերախտութիւնը նորա մտքին ու սրտին տէրն ու թագաւորն են դարձել, Առաջվան սէրով ու միաբանութեամբ կապված ու ապրող ընտանիքը, անձնասիրութեամբ բաժան բաժան է լինում, մինը միւսին չէ հաւանում, մինը միւսից գոհ չէ, ամեն մինը իւր խելքի կըտրածն, իւր սրտի կամեցածն է անում, ամեն մինի բռնած ճանապարհն այլ ևս միւսոյնը չէ մի ժամանակվան նման, փոխված է, որիշ որիշ է, զոկվեցան մին մինից շատ ու շատ բանով։ Առաջ իւրեանց համար անծանօթ հոգուերը չեն թողնում իւրեանց այժմ ունեցած կեանքն վայելել։ Լաւ և ուրախ օրեր տեսնել։ Նոցանից ամեն մինը սիրտը այրվելով իւր քաշած օրից, ասումէ ինքն իւր մտքում թէ մի ժամանակ, երբ որ ես աւելի քիչ ունեի, շատ աւելի ուրախ էի քան թէ այժմ։ իմ բաղդաւորութիւնը մեզ անբաղդութիւն բերաւ։

Մի որր ու անտէր մնացած աղջիկ, իւր մօր գերեզմանի վերայ ընկած, լաց է լինում։ Աղորմած հոգու գերեզմանի առաջին ծունկ չոքած, ուխտ է զնում։ Երդում ուտում, իւր մօրն հօգու համար ևս ինքն իւրեան խօսք տալիս, առաքինութեան հաւատարիմ մնալու, Եւ իւր տուած խօսքը կատարումէ։ Անտէր անտիրական մնալով, անձարացած մտնումէ խեղճ ողորմելին օտարների մօտ, նոցա տանն, նոցա զուռը ծառայելու և տեսնողի սիրտը չղիմանալու չափ հեղութեամբ ու խօնարհութեամբ սովորումէ, ինչպէս ասումեն, նոցա ամեն մինի քիմի ջուրը քաշել, ամեն մինի խելքին փշածը ու սրտի կատարել, Արտասուք թափելով է նա աշխատում և ուտում իւր հացը. բայց քրիստոնէական համբերութիւնը նորան ոյժ ու սիրտ է տալիս, և իւր քաշածը անտանելի չէ համարում իւր համար, Նա իւր անտէր ու անձար վիճակի մէջ իւրեան բաղդաւոր է համարում. բայց չէ, Նա անտէր ու անձար չէ, որովհետեւ սրտի մէջն Աստուած կայ ու ողորմած հոգի մօրն հոգին, կարծես, իւրեան օրհնելով, իւր վերայ պտոյտ է գալիս թռվաելով.—Բայց ասենք թէ յանկարծ նորա

վիճակը փոխվեցաւ, Այդ աղջկան ունեցած անմեղ, անարատ վարքի բարքի, բնութեան համար, հետն ևս իւր գեղեցկութեան համար մի շատ ունեղորի սիրտը նորան կպաւ, հաւանեց ու նորան առաւ, Իրեւ այդպիսի մի մարդի կին գառնալով, առաջվան օտարների զուոը ծառայողը այժմ բնքն հարուստ, անուանի, պատուաւոր կին է, իւր տանն ու զրանը ծառաներ ու աղամիններ ունեցող ու նոցա հրաման անող տան տէր զարձաւ, Անայնասէր է գառնում, զարդ ու պաճուճանք սիրող, հրամաններ անելը ուր կմնայ, այդ կայ ու կայ, զուարճութիւնների համար խելքն է գնում, վայելչութիւններ քաշելու համար հոգի է տալիս, հիանալի զրօսանքների հոսանքի մէջ կորաւ, խեղդվեցաւ նորա առաջվան պարզ կեանքն ու խոնարհութիւնն: Մարդկային բարձր դասակարգի, իշխանների ու մեծամեծների ամենակին չհաւանած, աւերջած վարքն այլ ևս իւրեան այնշափ վատ չէ թուում, առաքինութիւնն իւր վերայիցն թուաւ գնաց ասելու աստիճանին է եկել մօտենում, Բայց մօրն հոգին վերեիցն այլ ևս ցած չէ գալիս իւր վերան, չէ ժպտում: չէ օրհնում առաջվան նման, այլ իւր վերայ սարսափ բերող մի զարհուրելի ուրուական է դարձել իւր համար, — Խեղճ ողորմելին, իւր անբաղդութիւնը տանել կարողացաւ, բայց բաղդաւորութիւնն—չէ:

Մի բարեպաշտ, անխարդախ, ճշմարիտ մարդ ցանկութիւն ունէր իւր քաղաքակիցներից բարձր ու նոցա մէջ պատուելի լինելու, Այս բանին հասնելու համար, բոլոր իւր խելքն ու ոյժը բանեցրեց, որ ամեն արգելքներին յաղթէ: Այսպիսի իւր աշխատութեամբ և իւր յստակ, անբիծ կեանքովն ու գործովն ամենալաւ պատուի արժանի էր նա հասնելու, բայց չհասաւ, չտիրացաւ, Անբաղդութիւնը կարծես, մտրակը ձեռին առած, նորա ետեկցն ընկած, խփումէր նորան ու հեռուները փախցնում, Բանն այն պէս ձախ եկաւ ու այնտեղն հասաւ, որ զրպաններն ու արկղն բաւական դատարկվեցան, շատ չէր մնում որ աղքատութիւնն աչքով տեսնէր, Եշխարհիս ամենայն բանի անհաստատ ու փուչ լինելը փորձով հասկանալով, իւր մտքում զրած պատիւներին հասնելու մեծ մեծ յոյսերն յանկարծ բոլորովն կտրված և իւր գործն ձախի գնալը տեսնելով, ձեռք վեր առաւ ու մորիցն հանեց իւր պատուասիրութեան ցանկութիւններն ու փափազը, Այնուշետև բոլորովին սառն աչքով նայելով այն բանին վերայ, որ մի ժամանակ չափից գուրս ցանկալի էր իւր համար, և ինչին որ տուել էր իւր բոլոր խելքն ու միտքը և ինչի մէջ որ իւր բոլոր բաղդաւորութիւնն էր տեսնում, այնուշետև նորա բոլոր զանքն ու աշխատութիւնը այն եղաւ, որ ներքին արժանաւորութիւն ունենալու յաջողութիւնը գտնէ, և հասաւ իւր ցանկութեանն. Ներքին արժանաւորութեան հետ սերտ կապված իւր համեստութեամբ, բարութեամբ և ուրիշների բարուն համար մի օգտակար ծառայութիւն անելու միշտ պատրաստ լինելով ամեն մարդի համար, իրեւ պատուական հոգու տէր, շատ սիրելի մարդ զարձաւ, — Բայց այժմ ասենք թէ դա, որ ցայժմ մի անյայտ, աննշան մարդ էր, յանկարծ մարզիկների

կարդ անցաւ, քանի գնաց, իւր տեղն ու պատիւը աւելացաւ, բարձրացաւ, մութ աշխարհից լոյս աշխարհ եկաւ, ընկաւ, տեսնումէ, որ անկարծելի կերպով իւր հանգամանքները փառաւորապէս փոխվեցան, Այժմ իւր բաղդաւորութիւնը փաղաքշումէ իւրեան, Մի ժամանակվան պատուի հասնելու ցանկութիւնը չափից գուրս առատ մնունդ է գտնում իւր համար, Հպարտութեամբ և աչքը ձգում այն խոր փոսի վերայ, որտեղից գուրս եկաւ ու բարձրացաւ, կեղծաւոր ու յետ եկած մարդիկն ևս իւրեանց բերանից հանած խօսքերովն և իւրեանց երեսանց տուած պատիւներովն ցոյց են տալիս, որ արժանաւոր ոմն է, նորա նմանը շատ չկայ, նա քանի գնումէ, աւելի ու աւելի տէր կտրում, աւելի իշխանութիւն բանեցնել սիրում. Հրաման, իշխանութիւն, ոյժ, բոնութիւն բանեցնելում չափ ու սահմանը կորցնում, մեծութեանը համը, հոտը փախցնում, Բայց անհանգստութիւնը իւր սրտի որդն է գարձել, կրծումէ, ուտումէ իւրեան, իւր սխալները մատներով են համարում ամեն տեղ, իւր սրտի նեղութիւնն ու բարկութիւնն ևս թէ ինչի և ինչպէս են յայտնվում իւր խոշոր պակասութիւններն ևս աւելի պակասութիւններ անելու պատճառ է տալիս, որով իւր արած սխալներն ու պակասութիւնները աւելացնում:

Քանի քանի քաջեր փառքի ու գովասանքի արժանի էին, երբոր զեռ ևս պատերազմի մէջ աւելի քիչ յաջողութիւն ու բաղդ ունէին, Ո՛քափ սիրտ շարժող էր նոցա հոգու մեծութիւնը վտանգի մէջ, Որքան զարմանալի էր նոցա ուրախութիւնն ու շմուլացող, չկոտրող սրտի քաջութիւնն ամենամեծ նեղութեան մէջ գտնված բոպեռում, Բաղդը պսակեց նոցա եռանդութանքն ու ճիգն ու յաղթութիւնից յաղթութիւն տարաւ, յաղթանակից — յաղթանակի: Այն ժամանակ կորաւ նոցա չափաւորութիւնն, իւրեանց չափը ճանաչելը: Նոցա զօրաւոր սուրը, իւրեանց երկաթի գաւազանն դարձաւ, նոցա տեղական, հաստատ ու համբերող դիմացկոտութիւնը պահանջմունք անելու փոխվեցաւ, Նոքա, որ շատ բանի յաղթել էին, իւրեանց անյաղթելի կարծեցին, Նոքա կամեցան աստուածների հաւասար համարվել, Բայց աշխարհի նղովքն ու անէծքն նոցա վերայ աւելանալով սրտի նեղութիւն և նոցանից շատ ու շատ բանով աւելի ու աւելի դժգոհ բարկութեամբ նոցա փչացրեց: Նոքա իւրեանց անբաղտութեան մէջ մեծ մարդիկ էին, հոգով ու սրտով, բայց բաղդաւորութեան մէջ չարագործներ ու անմիտ մարդիկ գարձանաւ:

Ծուռ է, որ ասումն թէ մարդիս անբաղդութիւնն ու վատ վիճակը նորա արժանաւորութիւնը ամեն բանից լաւ կարող է ցոյց տալ: 2է, ընդհակառակն բուշակութեան է հոբետիս արքակութեան բիշուն ու անքանական ները և շուշ առաջ է հունական քույրութեան: Սորա համար Աստուծու ձեռից պէտք է ընդունենք նեղութեան, տրտմութեան և սուզի օրերն, իրքեւ ճշմարտապէս բարերարութիւններ նորանից և Պողոս առաքեալի հետ պէտքէ ասենք թէ մէն+ պարծենու-մէն+ մէր նէլու-նէ-նէրէ մէջ որով պէտքէ հասկանանք թէ փառք ու պարծանք են մեզ համար մեր քաշած նեղութիւններն:

Մէջ յեւրութիւններն ու անբաշխանները ու մէր չէլին բալիս են, և որ են ձեւ բերում ու հասկացնում էտքէլի է առեւ մարտով մու շոշ դուկ այն յարաբերութիւններն որ մէս պէտք ունենաւ աշխարհիս հետ, նոր են սովորեցնում ճանաչեցնում մեր սրտին ցանկալի ու սիրելի բաների իսկական զին ու արժէքը, որ մինչև այն ժամանակ չէինք հասկանում և չէինք իմանում: — Քանի որ մենք հանդարտ ու հանգիստ ապրումինք, մեր օրերն ու տարիները անհոգ անցկացնելով, մարդկային կեանքի վերայ ունեցած մեր գաղափարն ու հասկացողութիւնը մի ախորժ զգայական ու մարմնաւորյ բայց խարեական երազ էր: Այս մեր անմիտ կարծիքը պէտքէր սուտ զուրս գար, ու մենք սրտի ցաւով, պէտքէր հասկանայինք մեր սաստիկ խարված ու չարաչար սխալված լինելը: Այն մեծ փորձանքն, որ մեր զլխին եկաւ, այն սև օրերն, որոնց մենք հանդիպեցանք մեր հոգուն մեծ խրատներ եղան: Պէտք էր, որ կտրվէր այս մեր վէրքը երբ և իցէ, այն վէրքը, որից մենք տեղեկութիւն չունեինք, թէ ինչ վտանգ կարող է բերել մեր զլխին, եթէ կը տրվիով, չառողջանայինք մի օր, միանգամ, այս մեր մաքի սխալը երբ և իցէ պէտքէր ուղղվէր, մեր այն մեծ սխալը, որով մենք լոկ երևոյթն ու ստուերը խիկանի տեղ էինք համարում, անցաւորը — մնացականի տեղ, լոկ միջոցը — նպատակի տեղ ու քաղցր ախորժ: հանգիստ, անհոգ ապրելը մեր կոչման ու նշանակութեանը տեղ, այն կոչմանն, որի համար ստեղծված ու աշխարհ ծնված ենք:

Դու որ արտասուրքովդ աչքդ լցված, ասումես և ախ, երանի թէ այն երազը մնար, չփոխվէր, այն երազովս ես շատ բաղտաւոր էի, Երանի ձեռիցը դար այնպէս անէի, որ այս գեղեցիկ սխալս ու մոլորութիւնս միշտ ինձ մնար, ես նորանով ինձ դրախտումն էի կարծում: այն սխալս իմ սրտիս համար շատ ու շատ լաւ էր, քան թէ ինչ որ ճշմարտութիւնն եմ տեսնում: Դու որ այս ես ասում, լաւ հասկացիր ու խմացիր որ զու իրբեմարդ և իրբեմ քրիստոնեայ, քո խիկան արժանաւորութենիցդ շատ ստոր վիճակի մէջ ես եղել: Դու ինքդ քեզ չէիր ճանաչում: Բայց Աստուած սիրումք քեզ, նա քո մէջդ թմրած ոյժերդ զարթեցրեց աւելի բարձր գործունէութեան համար, աւելի աղնիւ հոգւոր պատերազմի համար: Քո մարմընիցդ է արիւն զնում: որովհետեւ միայն մարմինդ է վէրք ստացել: Մի օր զու այս ցաւի վերայ կծիծաղես, ինչպէս որ հասակը առած մարդը ծիծաղումէ մի ժամանակ իւր երեխայութեան օրերում թափած արտասուրքների պատճառների վերայ: Մի օր ճշմարտութեան զօրութեամբն ոյժ առած ու չորացած, պիտի լիառք ու պարծանք համարես քեզ համար քո քաշած նեղութիւններդ:

Անբաղզութիւնը մեզ կարծիս մատով ցոյց է տալիս թէ ինչն է մարդիս կեանքի մէջ ամենից աւելի զին ու արժէք ունեցող բանն, Երբոր մի մարդ, իւր ունեցած չունեցածի մեծ մասն կորցնումէ, այն ժամանակին է միայն հասկանում թէ որչափ յոյս զնել պէտքէ կամ կարելի է հարստութեան վերայ: Այն ժամանակն է հասկանում, թէ որքան սխալվումէ մարդոց որ

պրտովն կպչումէ երկրաւոր բարիքին, և իւր բոլոր ու ամեն բաղդաւորաւթիւնն նոցա մէջ տեսնում, ոչ միայն իւր բոլոր կեանքի մէջ, այլևս այդ զիտէ, կարելի է, որ իւր մահից յետոյ ևս Մարգիս հոգին հողեղէն ըլլ-նութիւն չէ, հոգի է, պէտքէ կախումն չունենայ ու կապված չլինի որեկցէ մեղ չմնալու, անցաւոր, փոփոխական ու վշանալու բանից, Մեծ անբաղդութիւնը պէտքէ նորան իւր ունեցած ներսի կեղակրից մաքրէ և մեծութեան առնէ, Քրիստոնեայ լինել կամեցողներ շատ կան, բայց կցանկային, որ թուլամորթ ու փափուկ կեանք ևս սւնենային: Յաւ-էիտնեականութեան նուիրված հոգիներ կցանկային շատերը ու կիսափազին լինել, բայց մի և նոյն ժամանակ երկրաւոր կեանքի ամենայն քաղցր ու ա-խորժ, հանգիստ ու լաւ օրերից ևս չզրկվել: Սորա համար մեր զիսին եկած փորձանքի երկաթի ձեռը խլելով մեղ կարծես, բանութեամբ յետ է քա-շում անցաւոր բանից ցոյց տալով մեղ անանց բանը, Թոռղ մեր մարմից արիւն գնայ, ու պէտքէ, որ բաւական գնայ մեղանից այդ արիւնը, եթէ որ կամենումենք, որ մեր հոգին յաղթանակ կանգնի, յաղթութեան հանդէսը կատարէ:

Ալ որ մարդիկներից խարվել է, զիտէ թէ որքան յոյս գնել պէտքէ մար-դիկների խօսքի վերայ, Իւր զիսին եկածը իւր համար դդուշութիւն ու խը-րատ եղաւ, Աստուծու ծանալպարհովն զնացող մի մարդ միայն կարող է ու-նենալ սրտի տեսղական հանդստութիւն ու հոգու մշական երջանկութիւն, և կունենայ անկասկած, ու ոչ ոք նորանից չէ կարող խլել, կամ զրկել որեկցէ հնարով, Այդպիսի Աստուածաներ մարդը, իւր ունեցած կեանքին ու գործին համար, աշխարհի ոչ լաւ ասելուն է կարօտ, ոչ վատ ասելուն: Մարգս նորա համար առաքինի պէտքէ չլինի, որ մարդիկ իւր վերայ լաւ աչքով նայեն, կամ նոցանից իւր վերայ գովասանք լսէ, կամ իւր վերայ լաւ համարումն ունենան, այլ ճշմարիտ, մեծահոգիր անշահասէր անխար-դախու շիտակի հաւատարիմ, ուրիշին լաւութիւն անելու պատրաստ, հա-սարակութեան օգտակար պէտքէ լինի նորա համար, որ յստակն մաքուր ու անրիծ հոգով կանգնի պարզերես իւր ստեղծող Աստուծու առաջին:

Արեմն սրտովդ պինդ մի՛ կպչեր այս փուչ աշխարհիս երեսին գտնված ոչ մի բանին, մինչեւ անգամ՝ այն մարդիկներին, որ քեզ համար քո աչ-քիդ լցոն են, քո հոգուդ կտորն են: Աչ մի բան մնալու չէ՛ քեզ: Այս Ճերմակ ու կարմիր թշերը, որ իւրեանց առողջութեան ու գեղեցկութեան պատռւական տեսքովն քո սիրոտ են ուրախացնում: այս սիրուն ու ծիծաղ աչքերը, որ վերադ են նայում, ընտրված են, կարելի է, որ արդէն վա-ղուան օրն, հողի բաժին լինելու ու հող դառնալու: Այն գեղեցիկ ըլր-թունքը, որ դու այս օրս ևս զետ համբուրել ես կարողանում, մի օր քա-թանի պէս պիտի սպրզնեն ու կապվին, այլ ևս ձայն զուրս չհանեն իւ-րեանցից, Բայց հոգեօրն, որ կար ու կեանք ունէր քեզ համար նոցա սր-տի մէջ, այն քոնն է ու միշտ քեզ ամենամերձաւոր ազգակից է ու կմնայ:

Նորանից զու երբէք չես դրկվի, երբէք չես բաժանվի, մինչեւ անգամ մահի ժամկն ես, չետն ես ու կմնաս անբաժան:

Ո՞վ սիրտ հանգստանցնող, հոգի մխիթարող միտք: Այս մտքով, այս մտածմունքով պայծառանումէ մարդիս առաջին բոլոր աշխարհս իւր բոլոր սև սև ամպերով ու մեր սրտին ու հոգուն պատաճ մութօվն: Փորձութեան տուած ուսումն ու խրատը իրաւ է, շատ ցաւալի է մեզ համար, որ այս աշխարհիս մէջ ոչ մի բանին սրտով պիտի չկալչենք—այլ միշտ աչքներիս առաջին ունենանք Աստուած, յաւիտենականութիւն ու առաքինութիւն, բայց այս խրատ ու սումը բարձրացնումէ, ազնուացնումէ մեր հոգին: Այս մեր առած խրատովն ու ստացած ուսմամբ աւելի մօտենում ենք աւելի մօտ ենք լինում Աստուածութեան: Մինչև անգամ այն ժամանակ, երբոր, ցաւերով սիրտներս լցված, արիւն արտասուք ևս թափէինք, զգումենք մենք միշտ և յաւիտեան մեզ վերայ խղճացող, մեզ ողորմող մի եակ, որ մեզ, երկրաւորով ստորացածներիս դէպ ի վեր, դէպի ինքն է քաշում, բարձրացնում:

Ո՞վ է տրտմողը, ո՞վ է թուլացողը, սիրտը կոտրած, ո՞ւմ սիրտն է, որ մխիթարութիւն գտնելու համար գեռ ևս երկիւղ ունի:

Ո՞չ. ես ևս փառք ու պարծանք եմ համարում ինձ համար իմ քաշած նեղութիւններս ու պարծենումմ իմ նեղութիւններիս մէջ. այդ նեղութիւններս, ո՞վ իմ Աստուած, այն սուրբ և ինձ զգուշացնող հրեշտակ-ներն են, որ Դու ուղարկեցիր, ինչպէս ուղարկումէիր մոլորվածներին յետ կանչելու դէպ ի Քեզ: Մարմնական վայելչութիւնների պարանները, որով պինդ կապված ու գերի բռնված է հոգիս, նոքա գալիս են բաց անելու, որ ազատեն: — Ու ես սէրով պէտքէ սովորեմ լաւ հասկանալ Քո ուղարկած պատգամաւորների խօսքերը: Երկրաւոր կորուստիս վերայ զգացած ցաւերիս մեծութենից պէտքէ հասկանամ թէ որչափ ստորացել, որչափ խոր փոսի մէջ եմ ընկել, որչափ հեռացել ու օտարացել եմ Քեզանից, իմ Աստուածս ու Տէրս: Ու եթէ որ իմ վէրքերս պյրվին ևս ցաւից ու նոցանից գնացած արիւնը չդադարի ևս, եթէ որ լացից ու արտասուք թափելուց աչքերս անգամ գուրս գան, դարձեալ, Տէր, իմ հոգուս յաւիտենական բարեկամս, դարձեալ պիտի Քեզ ու Քո իմ վերայ ևս ունեցած սիրոյդ փառք տամ և ինձ, իմ քաշած նեղութիւններս պարծանք համարեմ: Պատճառ որ գիտեմ: որ նեղութիւնները համբերութիւն կբերեն, համբերութիւնը—յաղնանակ, յաղնանակը—յայս, իու յայսը ոչ մէ ժամանակ չի ամացնեն:

(Թագէժ. )

Գլ. Եղ. Աղ.